


մը՝ այդ կերպը գնահատելու և անով խանդավառուելու ողջ-
մտութիւնը :

Ճիշտ այս վերջին պարագան է որ կ'արժէր թերեւս եր-
կու բառով վեր առնել այս գրքոյկին վերջաւորութեանը մէջ ,
մասնանշելու համար բարոյական իրողութիւն մը , որ մեր
հանրային կեանքին համար ունի իր նշանակութիւնը :

Այս Եկեղեցիին շինութեան ատեն , հանրային կարծիքն
ու զբացումը անոր նկատմամբ այս կամ այն ձեւով հրահր-



(թիւ 55) Փոքր ջահ եւ որմանքագ

ուած միջոցին ալ , երբեք չ'ստուգաւ խօսք մը կամ ձայն մը
որ փորձէր կասկածի սակ դնել նոր աղօթալայրի մը շինու-
թեան կարեւորութիւնը , ինչպէս եղած էր զոր օրինակ այլուր
նմանօրինակ շինութեանց ստեղծելու , երբ նոյնիսկ անոնք կ'կա-
տարուէին անհատի մը ձեռնառութեամբը , մասնաւորի մը
կամքին կամ կտակին համաձայն :